ՀՊՏՀ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀԵՂԱՓՈՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ՀՊՏՀ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2020

## *Սիրելի՛ գործընկերներ և ուսանողներ*

*Ավարտվեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գործունեության ևս մեկ տարի: Սա ծանրագույն ժամանակաշրջան էր ոչ միայն մեր երկրի և ժողովրդի, այլև մեր համալսարանի կյանքում. մարտին վրա հասած համավարակը, հայտարարված արտակարգ դրությունը, սեպտեմբերին պարտադրված աղետալի պատերազմը և ռազմական դրությունը, ցավոք, անորոշ ժամանակով հետաձգեցին կամ առհասարակ խափանեցին բուհի զարգացմանը միտված որոշ հեռանկարային ծրագրերի իրագործումը:*

*Մինչդեռ, 2020 թվականի սկիզբն իրապես խոստումնալից էր մեր համալսարանի համար. լայն թափով կյանքի էին կոչվում նախանշված ծրագրերը՝ գործատուների հետ համագործակցության սերտացում, հեղինակավոր ընկերությունների, նաև պետական կառույցների հետ փոխշահավետ հուշագրերի սփռագրում, կրթական ծրագրերի արդիականացում, վերապատրաստման դասընթացների ներդրում, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների աշխուժացում և այլն: Սակայն, սկսած մարտից, մեր առջև ծառացան այլ մարտահրավերներ: Անցումը կրթության կազմակերպման առցանց տարբերակին մի նոր փորձություն դարձավ բուհի համար, այդուհանդերձ, հպարտությամբ պետք է արձանագրել, որ պրոֆեսորադասախոսական, վարչական կազմի և ուսանողների ջանքերով մենք ոչ միայն հաղթահարեցինք դա, այլև մեզ հաջողվեց անխափան կերպով և հնարավորինս որակյալ ուսումնառության գործընթաց ապահովել: Մենք շարունակեցինք իրագործել նաև ՀՊՏՀ 2018-2022 թթ. զարգացման ռազմավարությամբ նախանշված գործողությունների ծրագիրը՝ ի կատար ածելով 2020 թ.-ի նախագծերի գերակշիռ մասը:*

*Անցած տարին մեզ համար, հիրավի, առանձնահատուկ պետք է լիներ. լրանում էր Տնտեսագիտական մայր համալսարանի հիմնադրման 45-ամյակը, որը հավուր պատշաճի նշելու համար նախատեսվել էին մի շարք լայնածավալ միջոցառումներ, որոնք, սակայն, վերը նշված պատճառներով հնարավոր չեղավ կյանքի կոչել և հասարակության լայն զանգվածներին մասնակիցը դարձնել այդ կարևոր իրադարձության:*

*Այս տարի ՀՊՏՀ ուսումնագիտական և ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է ոչ սովորական ձևաչափով՝ համապատասխանեցնելով տնտեսագիտական համալսարանի ռազմավարական նպատակներին և գործողությունների ծրագրին: Հավելվածների բաժնում արտացոլվել են բուհի գործունեության բոլոր ոլորտների թվային փվյալները: Նոր՝ ծրագրային բյուջետավորման ձևաչափով են տրամադրվել նաև բուհի բյուջեի ցուցանիշները:*

*Հարգանքով՝*
**ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ**
ՀՊՏՀ ռեկտոր

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ I
*Կրթական ծրագրերի որակի բարելավում* ..... *4*

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ II
*ՀՊՏՀ գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացում* ..... *12*

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ III
*Կիրառական հետազոտություններ-կրթություն և կիրառական հետազոտություններ-տնտեսություն ոլորտներում միասնացման և համագործակցության ապահովում* ..... *16*

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ IV
*Միջազգայնացման ընդլայնում* ..... *20*

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ V
*Ակադեմիական էթիկայի և սոցիալական պատասխանատվության սկզբունքների ներդրում* ..... *24*

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ..... *29*

- ՀՊՏՀ կրթական ծրագրեր և մասնագիտություններ ..... 29
- ՀՊՏՀ դասախոսական և վարչական անձնակազմ ..... 32
- Սովորողների կազմ ..... 33
- 2020-2021 ուսումնական տարում ՀՊՏՀ ընդունված ուսանողների թիվը ..... 38
- 2019-2020 ուսումնական տարում ՀՊՏՀ շրջանավարտների թիվը ..... 40
- 2019-2020 ուսումնական տարվա քննաշրջանների արդյունքները ..... 41
- Ուսումնառության առցանց կազմակերպման ցուցանիշներ ..... 46
- Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքներ ..... 50
- Գիտահետազոտական գործունեության արդյունքներ ..... 53
- Առցանց կրթությունից բավարարվածության հարցման արդյունքներ ..... 61
- Արտաքին կապեր ..... 66
- Հանրային կապեր ..... 72
- Ուսանողական խորհրդի գործունեության ցուցանիշներ ..... 72
- Գրադարանի աշխատանքի ընդհանուր ցուցանիշներ ..... 73
- Տնտեսական գործունեության արդյունքներ ..... 73

## ՀՊՏՀ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ


- Կրթական ծրագրեր և մասնագիտություններ ..... 75
- Դասախոսական և վարչական անձնակազմ ..... 75
- Սովորողների կազմ ..... 76
- 2020-2021 ուսումնական տարում ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ ընդունված ուսանողների թիվը ..... 77
- 2020-2021 ուսումնական տարում ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի շրջանավարտների թիվը ..... 77
- 2018-2019 ուստարվա քննաշրջանների արդյունքներ ..... 78
- Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքներ ..... 79
- Գիտահետազոտական գործունեության արդյունքներ ..... 80
- Արտաքին կապեր ..... 80
- Ուսանողական խորհրդի գործունեության ցուցանիշներ ..... 82
- 2019-2020 ուստարվա ուսման վարձի զեղչեր և ֆինանսական օգնություններ ..... 82
- Գրադարանի աշխատանքի ընդհանուր ցուցանիշներ ..... 82
- Տնտեսական գործունեության արդյունքներ ..... 82


## ՀՊՏՀ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ


- Կրթական ծրագրերը և մասնագիտություններ ..... 83
- Դասախոսական և վարչական անձնակազմ ..... 83
- Սովորողների կազմ ..... 83
- 2020-2021 ուսումնական տարում ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ ընդունված ուսանողների թիվը ..... 84
- 2020-2021 ուսումնական տարում ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի շրջանավարտների թիվը ..... 84
- 2019-2020 ուստարվա քննաշրջանների արդյունքներ ..... 85
- Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքներ ..... 86
- Մասնակցությունը գիտական միջոցառումներին ..... 86
- Ուսանողական խորհրդի գործունեության ցուցանիշներ ..... 86
- 2019-2020 ուստարվա ուսման վարձի զեղչեր և ֆինանսական օգնություններ ..... 87
- Գրադարանի աշխատանքի ընդհանուր ցուցանիշներ ..... 87
- Տնտեսական գործունեության արդյունքներ ..... 87

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ I

### *Կրթական ծրագրերի որակի բարելավում*

Ըստ ՀՊՏՀ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «Կրթական ծրագրերի որակի բարելավում» ռազմավարական նպատակի՝ 2020 թ.-ի համար նախատեսվել էին հետևյալ գործողությունները.

- կրթական ծրագրի մոդուլավորում և մոդուլների կրեդիտային բեռնվածության փոխկապակցում ուսումնառությանն անհրաժեշտ ժամանակի ծավալին,
- կրթական ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի մուտքային հստակ պահանջների սահմանում և մոդուլային հաջորդականության կառուցակարգերի հաստատում բոլոր կրթական ծրագրերում,
- կրթական ծրագրի կամ ընտրական մոդուլների ընտրության ընթացակարգերի մշակում, փորձարկում և սահմանում,
- շրջանավարտների առաջընթացի (կարիերայի) հետագծի տվյալների բազայի ձևավորում,
- կիրառական գիտելիք հաղորդող դասավանդման մեթոդների ներդրում կրթական ծրագրի առանձին մոդուլների առնվազն 20%-ում,
- բակալավրիական կրթության մասնագիտությունների համար մշակված կարճ պարբերաշրջանով կրթական ծրագրերի փորձաքննության իրականացում,
- դասախոսների վերապատրաստման արդյունքների գնահատում և պրոֆեսորադասախոսական կազմի օպտիմալ կառուցվածքի ձևավորում, դասախոսության նյութերի առկայության շահադրդող (մոտիվացնող) համակարգի ձևավորում,
- ՀՊՏՀ ընթերցասրահի նստատեղերի 20%-ի ապահովում համացանցային հասանելիությամբ համակարգչային տեխնիկայով,
- լսարանային ֆոնդի առնվազն 20%-ի վերազինում պրոյեկտորներով, խելացի (սմարթ) գրատախտակներով կամ նույն նպատակին ծառայող տեխնիկական միջոցներով,
- QR գրադարանների զարգացում,
- միջոլորտային մասնագիտությունների համատեղ կրթական ծրագրերի գծով ընդունելության կազմակերպում,
- գործատուների հետ համատեղ՝ կրթական ծրագրերի մշակում, հաստատում և իրականացման թույլտվության (լիցենզիաների) ստացում,

- ֆակուլտետների գործառույթների վերափոխում՝ հարմարեցնելով անհատական կրեդիտային բեռնվածքով սովորող ուսանողների ուսումնական գործընթացի կազմակերպման պահանջներին,
- բակալավրիատի ռեգիստրարի առանձնացված ստորաբաժանման հիմնում,
- Moodle համակարգով կրթության կազմակերպմանը և ուսումնառությանը նպաստող մեթոդական բազայի ձևավորում գործող ՄԿԾ-ներում ներառված դասընթացների առնվազն 40%-ի համար,
- Moodle համակարգով հեռավար կրթության կազմակերպման և ուսումնառությանը նպաստող մեթոդական բազայի ձևավորում՝ առնվազն 3 ՄԿԾ-ի համար:

Այս ռազմավարական նպատակին համահունչ՝ ՀՊՏՀ-ում 2020 թ. իրականացվել են կրթական ծրագրերի վերանայում, կառուցվածքային և բովանդակային բարեփոխումներ, մշակվել մագիստրոսական նոր ծրագրեր, որոնք իրականացվում են գործատուների հետ համատեղ:

Մասնավորապես՝ հիմնովին վերանայվել և աշխատաշուկայի արդի պահանջներին են համապատասխանեցվել հետևյալ բակալավրիական մասնագիտությունների կրթական ծրագրերը,

- «Տեղեկատվական համակարգեր»,
- «Բնապահպանություն և բնօգտագործում»,
- «Սերվիս»,
- «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա»,
- «Զբոսաշրջություն»:

Արդյունքում՝ 2020-2021 ուսումնական տարում նշված մասնագիտություններն առաջին անգամ կայացել են: Մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայմանը ներգրավվել են ոլորտի առաջատար մասնագետներ, գործատուներ: Համալրվել է նաև այդ մասնագիտություններով դասավանդող դասախոսների կազմը:

2020 թ. ՀՊՏՀ-ն, գործատուների հետ համատեղ, մշակել և լիցենզավորել է նոր մոդուլային կառուցվածքով 11 մագիստրոսական ծրագրեր, որոնցից 5-ը՝ միջոլորտային: Մագիստրոսական ծրագրերի տևողությունը 1,5 տարի է, դասերն անցկացվում են շաբաթական երեք անգամ, հիմնականում՝ երեկոյան ժամերին: Բոլոր ծրագրերը մշակվել են ԱՄՆ-ի, Եվրոպայի և Ռուսաստանի մի քանի տասնյակ առաջավոր և հեղինակավոր համալսարանների հաջողված փորձի մանրակրկիտ վերլուծության, մեր իրողության պայմաններում դրա տեղայնացման, նաև հնարավոր գործատու-գործընկեր կազմակերպությունների պահանջարկի խորքային ուսումնասիրության արդյունքում: Մոդուլների

ավարտից անմիջապես հետո ուսանողները փորձառություն են անցել գործընկեր-գործատու կազմակերպություններում: Մասնավորապես՝ «Բանկային գործունեության կազմակերպում» մասնագիտության գործընկերն է «Արարատ բանկ» ՓԲԸ-ն, իսկ դասախոսական կազմում ներգրավված են մասնագետներ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ից, «Արդշինբանկ» ՓԲԸ-ից, «Ipoteka-Bank»-ից, «Ագրոլիզինգ լիզինգային վարկային կազմակերպություն» ՍՊԸ-ից, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ից, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի ղեկավար կազմից: «Տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում» միջոլորտային կրթական ծրագիրը մշակվել և իրականացվում է «Arpinet» ընկերության և Օպերատորների միության, «Նորարարությունների տնտեսագիտություն» կրթական ծրագիրը՝ ՀՊՏՀ «Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» գիտաուսումնական լաբորատորիայի, «Արդյունաբերական բիզնեսի կազմակերպում և կառավարում» միջոլորտային մագիստրոսական ծրագիրը՝ «Արմենիան Տիտանիում Փրոդաքշն» ընկերության, «Հանրային ծառայությունների բիզնեսի կազմակերպում և կառավարում» միջոլորտային մագիստրոսական ծրագիրը՝ «Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի» (ՀԾԿՀ) և «Հայաստանի գործատուների հանրապետական միության» (ՀԳՀՄ), «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» մագիստրոսական ծրագիրը՝ «The GURUS» ՍՊԸ-ի, «Մարդկային ռեսուրսների կառավարում» մագիստրոսական կրթական ծրագիրը՝ U-Com ընկերության, «Ապահովագրական գործ» մագիստրոսական կրթական ծրագիրը՝ «Ինգո Արմենիա» ապահովագրական ընկերության հետ համատեղ: «Բուժհաստատությունների կառավարում» և «Առողջապահության կառավարում և վարչարարություն» միջոլորտային մագիստրոսական ծրագրերի գործընկերն է «Ազգային բժշկական պալատը», իսկ դասախոսական կազմում ներգրավված են մասնագետներ ինչպես առողջապահության նախարարությունից, այնպես էլ ծրագրի գործընկեր բժշկական կենտրոններից: Հարկ է նշել, որ 11 նոր մագիստրոսական ծրագրերից 2020-2021 ուսումնական տարում կայացել է 8-ը:

Նորերին զուգահեռ, վերանայվել են նաև քսան նախկին մագիստրոսական կրթական ծրագրերը, որոշ մոդուլներ համալրվել են կիրառական գիտելիքներ հաղորդող դասավանդման մեթոդներով, ավելացվել է կամընտրական առարկաների տեսակարար կշիռը, ներդրվել և փորձարկվել է կամընտրական առարկաների ընտրության նոր համակարգ, որն իրականցվում է Moodle հարթակի միջոցով: Որոշ կրթական ծրագրեր արդիականացվել են միջազգային ծրագրերի շրջանակներում. մասնավորապես՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մագիստրոսական կրթական ծրագիրը վերանայվել է

ըստ Եվրոպական միության կողմից համաֆինանսավորվող Ժան Մոնե ծրագրի, և ներդրվել են ԵՄ տնտեսությանը, քաղաքականությանը և վարչարարությանը վերաբերող երեք և Ճապոնիայի տնտեսությանն ու քաղաքականությանն առնչվող մեկ նոր դասընթացներ:

«Կորպորատիվ ֆինանսներ» մագիստրոսական կրթական ծրագիրը վերանայվել է ԵՄ «Էրազմուս+» ծրագրի կողմից համաֆինանսավորվող REFINE նախագծի շրջանակում, և ՀՊՏՀ 8 դասախոս Ավստրիայում, Սլովակիայում, Նիդեռլանդներում և Ֆրանսիայում գործող նախագծի գործընկեր-համալսարաններում մասնակցել է երկշաբաթյա վերապատրաստումների:

«Նախագծերի կառավարում» մագիստրոսական համատեղ կրթական ծրագիրը վերանայվել է՝ մեկտեղելով տնտեսագիտական և կառավարման իմացությունը տեխնիկական գիտելիքի ու հմտությունների հետ:

Հարկ է նշել, որ 20 նախկին մագիստրոսական ծրագրերից 2020-2021 ուսումնական տարում կայացել է 12-ը:

Որակյալ կրթության ապահովմանը նպաստող գործոններից է նաև ուսանողների փորձառության կազմակերպումը: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են գիտահետազոտական, ուսումնաարտադրական և գիտամանկավարժական փորձառություններ ինչպես բակալավրիատի ու մագիստրատուրայի ուսանողների, այնպես էլ ասպիրանտների համար: Ընդհանուր առմամբ, ընթացիկ տարում 268 կազմակերպությունում փորձառության են մասնակցել 1676 ուսանող և 18 ասպիրանտ: Փորձառության մասնակիցների մոտ 71%-ը բակալավրիատի առկա և հեռակա կրթաձևերի ուսանող է: Ընդորում, բակավարիատի ուսանողների 36%-ը փորձառության փուլում արդեն իսկ ապահովված էր աշխատանքով:

Հաշվետու տարում հայաստանյան 51 կազմակերպությունում գիտահետազոտական փորձառության է մասնակցել մագիստրատուրայի 489 ուսանող, որից 74%-ն այդ պահին ապահովված է եղել աշխատանքով: Մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման փորձառության ժամանակահատվածն ընթացիկ տարում համընկել է կորոնավիրուսային համավարակի տարածման շրջանի հետ: Դրանով պայմանավորված՝ մի շարք գործատուների հետ վարվել են անհրաժեշտ բանակցություններ, որոնց արդյունքում ուսանողներին հնարավորություն է ընձեռվել փորձառություն անցնելու հեռավար եղանակով:

Ընդհանուր առմամբ, բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները փորձառության վայրի ընտրության հարցում նախապատվությունը տալիս են բանկային համակարգում գործող ընկերություններին: Այս առումով, ընթացիկ ժամանակահատվածում հատկապես հետաքրքրություն են ներկայացրել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն (63 ուսանող), «Արդշինբանկ» ՓԲԸ-ն (51 ուսանող),

«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ն (42 ուսանող), «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն (34 ուսանող): Մասնավոր հատվածում գործող կազմակերպություններից նախընտրելի են համարվել «Տաշիր գրուպ» ընկերությունը և «ԷՄ ԲԻ ՋԻ գրուպ» ՍՊԸ-ն, իսկ պետական հատվածում՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը (51 ուսանող), ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեն (47 ուսանող), ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն (46 ուսանող), ՀՀ կենտրոնական բանկը (20 ուսանող) և այլն: ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում հետազոտական փորձառություն է անցել մագիստրատուրայի 103, ասպիրանտուրայի 18, ինչպես նաև արտասահմանյան բուհի 1 ուսանող:

Ուսանողների փորձառության կազմակերպման փուլում, գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ, մշակվել են մրցութային ընտրության նոր ձևաչափեր: Մասնավորապես՝ մի շարք բանկերի դեպքում («ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ, «Այդի բանկ» ՓԲԸ, «Կոնվերս բանկ» ՓԲԸ) ուսանողների թեստային և հարցազրուցային մրցույթները կազմակերպվել են բուհում:

Հաշվետու ժամանահատվածում ներդրվել է հարցումների անցկացման նոր համակարգ, որի շնորհիվ փորձառության ավարտից հետո ուսանողները հնարավորություն են ունեցել ներկայացնելու ձեռք բերված հմտություններն ու կարողությունները, բարձրաձայնելու այն հիմնական խնդիրների ու դժվարությունների մասին, որոնց բախվել են փորձառության անցկացման վայրերում, ինչպես նաև գնահատելու փորձառության կազմակերպման, ընթացքի և ավարտի փուլերում ընդգրկված ստորաբաժանումների, ղեկավար կազմի աշխատանքի որակը: Միաժամանակ, հստակեցվել է այն ուսանողների ցանկը, որոնք փորձառության վայրում ստացել են աշխատանքի առաջարկ կամ ձեռք են բերել պայմանավորվածություն հետագայում աշխատանքի տեղավորման վերաբերյալ:

Ընթացիկ տարում իրականացվել են նաև ուսանողների փորձառության կազմակերպման միասնական ընթացակարգի մշակման աշխատանքներ, որոնց արդյունքում կազմվել է հստակ ժամանակացույց՝ այս առումով արդյունավետության բարձրացման, ինչպես նաև հաշվետվողականության հստակ կառուցակարգերի մշակման համար:

Կրթական ծրագրերի բարեփոխմանը զուգահեռ, ՀՊՏՀ-ում ուշադրության կենտրոնում են եղել նաև դասախոսական անձնակազմի վերապատրաստման խնդիրները: Մասնավորապես՝ շարունակական կրթության և վերապատրաստումների բաժինը 2019 թվականին իրականացված՝ ՀՊՏՀ աշխատակիցների կարիքների վերհանման և դրանց վերլուծության արդյունքում ստացված տվյալների հիման վրա, Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի հետ համատեղ, 2020 թ. հունվարի 23-ից փետրվարի 1-ն անցկացրել է

համալսարանի աշխատակազմի անգլերենի իմացության թեստավորում՝ բաղկացած գրավոր և բանավոր բաղադրիչներից և միտված մասնակիցների ոչ միայն գրավոր, այլև բանավոր հաղորդակցման հմտությունների վերհանմանը: Թեստավորմանը մասնակցել է 100 աշխատակից՝ պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական կազմերից:

2020 թ., Ռուսաստանի ժողովրդական տնտեսության և պետական ծառայության ակադեմիայի դասախոսների հետ համատեղ, ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական կազմի համար կազմակերպվել են «Դասավանդման մեթոդաբանություն» և «Վերջնարդյունքահեն կրթական ծրագրեր» վերապատրաստման դասընթացները, ինչպես նաև հնարավորություն է տրվել 30% զեղչով վերապատրաստվելու նույն բաժնի կողմից կազմակերպվող բոլոր վճարովի դասընթացների շրջանակներում: Ընդհանուր առմամբ, 2020 թ. վերապատրաստվել և տարբեր դասընթացների է մասնակցել ՀՊՏՀ դասախոսական կազմի 25%-ը:

Համավարակը որոշակի փոփոխությունների անհրաժեշտություն առաջացրեց տարբեր փորձագետների, ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի անդամների հետ հանդիպումների, վարպետաց-դասերի կազմակերպման ձևաչափում: Մասնավորապես՝ համալսարանի մարքեթինգի պատասխանատու Ա. Հարությունյանի նախաձեռնությամբ ստեղծվեց ASUE-Talks հարթակը, որի շրջանակում, որպես հրավիրյալ փորձագետներ, հանդես եկան միջազգային տարբեր կառույցների ղեկավարներ, արտասահմանյան գործընկեր բուհերի դասախոսներ, փորձագիտական հանրույթի արհեստավարժ ներկայացուցիչներ: Հեռավար կերպով կազմակերպվող ASUE-Talks քննարկումները հնարավորություն ընձեռեցին ոչ միայն շահառուներին ներկայացնելու որոշակի խնդրի շուրջ փորձագետների մոտեցումները, այլև հարցուպատասխանի միջոցով քննարկումներն առավել ինտերակտիվ դարձնելու: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են յոթ մասնագիտական քննարկումներ, որոնց ընդհանուր դիտումների քանակը գերազանցել է 44,000-ը:

Հաշվետու տարում ՀՊՏՀ-ում ձևավորվել է շրջանավարտների տվյալների բազա, որը, ընդհանուր առմամբ, ներառում է նախնական տեղեկություններ 2175 շրջանավարտի վերաբերյալ: Ձևավորված տեղեկատվական շտեմարանը պարբերական համալրումների փուլում է: Շրջանավարտների հետ կապի պահպանումը թույլ է տալիս համալսարանին վերջիններիս նույնպես ներառել գործընկեր կազմակերպությունների թափուր աշխատատեղերի համալրման գործընթացներում: Դա նաև միջոց է հետևելու շրջանավարտների առաջխաղացման հետագծին: Համաձայն Աշխատաշուկայի և շրջանավարտների հետ

աշխատանքի բաժնի կողմից փորձառությունների կազմակերպման փուլում հավաքագրված նախնական տեղեկությունների՝ 2019-2020 ուսումնական տարում համալսարանի բակալավրիատի շրջանավարտների 22%-ը և մագիստրատուրայի շրջանավարտների 74%-ը աշխատում են ըստ մասնագիտության: Վերոնշյալ բաժինը պարբերաբար, զանազան եղանակներով (էլեկտրոնային և հեռախոսազանգերի միջոցով հարցումներ, Facebook ու Linkedin սոցիալական ցանցերում կապի պահպանում) թարմացնում է շրջանավարտների առաջխաղացման տվյալները: Բացի աշխատանքի տեղավորումից, բաժինն իրականացնում է նաև խորհրդատվական գործառույթներ, որոնք առնչվում են ուսանողների ինքնակենսագրականների (CV) պատրաստմանը, գործատուների հետ հարցազրույցներին պատշաճ մակարդակով ներկայանալուն: Հաշվետու տարում ՀՊՏՀ կայքում տեղադրվել է թափուր աշխատատեղի մասին մոտ 100 հայտարարություն:

Կարևորելով համալսարան-դպրոց կապը՝ Արտաքին կապերի դեպարտամենտը, ուսանողական խորհրդի հետ համատեղ, մասնագիտական կողմնորոշման նպատակով կազմակերպել է դպրոցականների այց-հանդիպումներ, բաց դռների օրեր, հյուրընկալել մեկ տասնյակից ավելի ավագ դպրոցների և քոլեջների ավելի քան 400 աշակերտի: Դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը միտված հանդիպումներն առաջին անգամ անցկացվել են «ուսանողները ուսանողների համար» (student-to-student) ձևաչափով, որոնց ընթացքում ապագա դիմորդները ոչ միայն ստացել են մանրամասն տեղեկություններ ՀՊՏՀ բոլոր ֆակուլտետների և մասնագիտությունների վերաբերյալ, այլև տեղեկացել ընդունելության գործընթացին, համալսարանական կյանքին, շրջայց կատարել բուհում՝ ծանոթանալով ենթակառուցվածքներին:

Մարզային դպրոցների դիմորդներին ՀՊՏՀ-ի մասին իրազեկելու նպատակով, X-Tech ընկերության հետ համատեղ, նկարահանվել է տեսահոլովակ՝ 5G ձևաչափով, ձեռք են բերվել VR ակնոցներ: Նոր տեխնոլոգիական մեթոդների կիրառմամբ այս մարքեթինգային քայլը թույլ է տվել ավելի հասանելի և տեսանելի դարձնել համալսարանական առօրյան երիտասարդ սերնդի համար:

Այս ամենին զուգահեռ, ՀՊՏՀ պաշտոնական կայքում արդիականացվել, համալրվել և համակարգվել է «Դիմորդ» բաժինը, որտեղ զետեղված են մանրամասներ բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ընդունելության գործընթացի (շեմային քննություններ, հարցաշարեր, վարձավճարներ), կրթական ծրագրերի և աշխատանքի հնարավորությունների առնչությամբ: ՀՊՏՀ ֆեյսբուքյան էջում բացվել է նաև «ՀՊՏՀ դիմորդ 2020» խումբը, որն ունի 2900-ից ավելի անդամ և որն ընդունելության գործընթացի առցանց

կազմակերպման պայմաններում հնարավորություն է տվել երկկողմանի օպերատիվ կապ ապահովելու և խորհրդատվություն տրամադրելու դիմորդներին: 2020 թ. ՀՊՏՀ՝ մասնագիտական կողմնորոշման ու դիմորդների հետ աշխատանքի աննախադեպ ծավալներն էապես ազդել են ընդունելության գործընթացի վրա, որի արդյունքում 2020-2021 ուսումնական տարում առկա բակալավրիատ ընդունվողների թիվը նախորդ ուսումնական տարվա համեմատ աճել է 86%-ով, իսկ առկա մագիստրատուրայինը՝ 34,1%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում բարելավվել է բուհի գրադարանի, լսարանային ֆոնդի և տեղեկատվական ռեսուրսների վիճակը: Մասնավորապես՝ ՀՊՏՀ ընթերցասրահի նստատեղերի 100%-ն ապահովվել է համակարգչային տեխնիկայով, իսկ 50%-ը՝ ինտերնետային հասանելիությամբ, լսարանային ֆոնդի 32%-ը՝ պրոյեկտորներով: ՀՊՏՀ գրադարանն անվճար հասանելիություն է ստացել 6 միջազգային էլեկտրոնային հարթակներից:

Պայմանավորված հանրապետությունում կորոնավիրուսային համաճարակի տարածմամբ՝ հաշվետու ժամանակաշրջանում ուսումնական գործընթացը կազմակերպվել է առցանց՝ Zoom և Moodle հաթակներում: Ելնելով այս իրողությունից՝ ձևավորվել է մեթոդական բազա բոլոր ՄԿԾ-ների համար, ինչպես նաև ներբեռնվել են բոլոր դասընթացների վերաբերյալ էլեկտրոնային գրքեր և մեթոդական նյութեր, տեսադասախոսություններ, քեյս սթադիներ, առարկայական ծրագրեր, հարցաշարեր և այլն: Zoom ընկերության հետ պայմանագրի կնքման արդյունքում ձեռք է բերվել 100 լիցենզիոն օգտահաշիվներ, որոնց միջոցով իրականացվում են բոլոր պարապմունքները՝ ըստ հաստատված դասացուցակների: Zoom օգտահաշիվներն ինտեգրված են Moodle հարթակում, ինչը հնարավորություն է տալիս տեսաձայնագրելու և պահպանելու դասախոսությունները, ինչպես նաև իրականացնելու պատշաճ վերահսկողություն ուսումնական գործընթացի նկատմամբ: Moodle հարթակում կազմակերպվել է 3280 դասընթաց, ինչպես նաև թեստային առաջադրանքով ավարտվող ստուգարքների և քննությունների ամփոփիչ ստուգումներ: Հեռավար կրթության ներդրումից ի վեր այս հարթակ այցելությունների թիվը կազմել է շուրջ 1,6 միլիոն:

Ամբողջությամբ գործարկվել է նաև ՀՊՏՀ էլեկտրոնային դեկանատի համակարգը (ums.asue.am), որտեղ ներբեռնվել են բոլոր ուսանողների տվյալները, ձևավորվել էլեկտրոնային մատյաններ, տեղեկագրեր, ավարտական աշխատանքների ամփոփագրեր: Այստեղ գործում են առցանց քննությունների քննական տոմսերի տրամադրման, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման ամփոփաթերթերի միաժամանակյա առցանց լրացման թափանցիկ կառուցակարգեր: Ըստ այդմ էլ իրականացվել է բակալավրիատի և մագիստրատուրայի

2019-2020 ուսումնական տարվա ավարտական կուրսերի ուսանողների ամփոփիչ ատեստավորումը:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ II

### *ՀՊՏՀ գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացում*

Ըստ ՀՊՏՀ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «ՀՊՏՀ գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացում» ռազմավարական նպատակի՝ 2020 թ.-ի համար նախատեսված էին հետևյալ գործողությունները.

- համաձայն հիմնական կատարողական ցուցանիշների՝ կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվողականության համակարգի ներդրում,
- գործառույթների արտապատվիրման պայմանագրերի կնքում և փոխանցում մասնագիտացած կազմակերպություններին,
- միևնույն մասնագիտության ոլորտում բակալավրիական միևնույն կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնների միավորում մեկ ամբիոնի շրջանակում՝ ըստ հաստատված չափանիշների և օպտիմալ հարաբերակցության,
- միևնույն մասնագիտության ոլորտում և միևնույն որակավորումը շնորհող կրթական ծրագրեր իրականացնող ամբիոնների միավորում մեկ ֆակուլտետի շրջանակում,
- պայմանագրային կատարողներից ծառայությունների ձեռքբերման պայմանների տեխնիկական նկարագրերի և ընթացակարգերի մշակում և համաձայնեցում ոլորտը կարգավորողի հետ,
- խորհրդատվության, հաշվապահական, աուդիտի և մարքեթինգային ծառայությունների մատուցման նպատակով փորձարարական լաբորատորիաների հիմնում,
- ամառային և ձմեռային դպրոցների հիմնում,
- վճարովի լրացուցիչ կրթական ծառայությունների ներդրում,
- ՀՊՏՀ խորհրդանիշներով պարագաների թողարկում և դրանց վաճառքի կազմակերպում բուհի տարածքում,
- կայունության և զարգացման հիմնադրամի ձևավորում,

- ՀՊՏՀ ընթացիկ բյուջեում կայունության և զարգացման հիմնադրամին նպատակաուղղված միջոցների չափի հաստատում:

Հաշվետու տարում ՀՊՏՀ-ում մշակվել են գործունեության կարգավորման մի շարք կարգեր, մասնավորապես՝ պատրաստվել և գիտական խորհրդի քննարկմանն են ներկայացվել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և ատեստավորման», «ՀՊՏՀ անձնակազմի պաշտոնների անձնագրերի», «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ներքին կարգապահական կանոնների» և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի աշխատողների գործունեության գնահատման և խրախուսման» վերաբերյալ կանոնակարգերը, որոնք նախատեսվում է հաստատել և կիրառության մեջ դնել առաջիկայում:

Միաժամանակ, մշակվել է համալսարանի ստորաբաժանումների հաշվետվողականության համակարգ՝ ըստ ռազմավարական նպատակներում սահմանված հիմնական կատարողական ցուցանիշների, որը հնարավորություն է տալիս ավելի համակարգված, չափելի և տեսանելի դարձնելու որոշակի ստորաբաժանումների կատարած աշխատանքը, իսկ հետագայում նաև ներդնելու աշխատակիցների խրախուսման անհատական կառուցակարգեր:

Հաշվապահական, աուդիտի, մարքեթինգային և այլ ծառայությունների մատուցման նպատակով 2019 թ. ՀՊՏՀ-ում հիմվել են «Փոփոխությունների կառավարման լաբորատորիա»՝ ASUE ChangeLab-ը և «Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» և «Տնտեսության անորոշության մոդելավորում» լաբորատորիաները:

Հաշվետու ժամանակաշրջանում ASUE ChangeLab-ը մրցույթով ընտրված ՀՊՏՀ 20 ուսանողի համար կազմակերպել է 16 վարպետաց դասեր, որոնց հիմնական նպատակն է եղել տեղական և արտասահմանյան կազմակերպությունների ղեկավարների ներգրավմամբ փոխել ստարտափների ստեղծման և կազմակերպությունների զարգացման վերաբերյալ առկա կարծրատիպերը, ցույց տալ լավագույն փորձը, դրա հնարավոր արդյունքները թե՛ ուսանողների, թե՛ հատկապես գործատուների համար: Ձեռք բերված գործնական հմտությունների շնորհիվ՝ դասընթացների մասնակից ուսանողների 60%-ը գործընկեր կազմակերպություններում անցել է մասնագիտական աշխատանքի:

ASUE ChangeLab-ը, համագործակցելով Սոցիալական բիզնես դպրոցի հետ, նույն ժամանակահատվածում 30-ից ավելի ստարտափների համար իրականացրել է մենթորային ծրագիր ֆինանսական, արտադրական, թիմային աշխատանքի և այլ ուղղություններով: ԼԱԲ-ում ներգրավված 8 ուսանող մասնակցել է «ԿԱՅԾ» սոցիալական նորարարական ինկուբատոր ծրագրին՝

ուղղված կրթության ոլորտում նորարարական նախագծերի խթանմանը: Ներկայացվել է երկու գաղափար, որոնք հաղթահարել են մրցույթի բոլոր փուլերը՝ բացառությամբ վերջինի:

ASUE ChangeLab-ը համագործակցության հուշագիր է ստորագրել «ԻՐԻՍ բիզնես ինկուբատոր» հիմնադրամի հետ, որի շրջանակում ՀՊՏՀ ուսանողներին և շրջանավարտներին հնարավորություն է ընձեռվել մասնակցելու ստարտափների ու գործող բիզնեսների ֆինանսավորման ծրագրին: ChangeLab-ի տնօրենն ընդգրկվել է մրցութային հանձնաժողովում՝ որպես մրցատյանի անդամ և որպես մենթոր:

Հաշվի առնելով ՀՀ տնտեսության առաջնահերթ հիմնախնդիրները՝ «Տնտեսության անորոշության մոդելավորում» լաբորատորիան մշակել է կորոնավիրուսային համավարակի տարածման կանխատեսման մեթոդաբանություն, որը դրական գնահատականի է արժանացել Ռուսաստանի մասնագետների կողմից, ինչի արդյունքում այս տարի ռուսական համապետական РИА Новости պորտալում հրապարակվել են 60-ից ավելի նյութեր, որոնց հղում են կատարել ավելի քան 100 ռուսական և այլ երկրների լրատվամիջոցներ:

Միջազգային առևտրի սուբյեկտներին խորհրդատվություն տրամադրելու նպատակով նույն լաբորատորիայում, big data մեթոդաբանության հիման վրա, կազմվել է ապրանքների արտահանման և ներմուծման ինտերակտիվ քարտեզ, որը հնարավոր է փոփոխել ժամանակին համընթաց և որը թույլ է տալիս ավելի համապարփակ կերպով վերլուծել ապրանքների արտահանման և ներմուծման գործընթացների շարժընթացը տարբեր երկրներում: Քարտեզը կարելի է կառուցել ըստ արտահանման ու ներմուծման երկնիշ, քառանիշ և վեցանիշ ապրանքանիշների համակարգի՝ իրականացնելով կանխատեսումներ յուրաքանչյուր ապրանքային խմբի կամ պետության համար:

Հաշվետու տարում «Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» լաբորատորիայում ուսումնասիրվել են Եվրասիական տնտեսական միության անդամ հինգ երկրում նորարարական գործընթացների և տեխնոլոգիաների փոխանցման հիմնախնդիրները, հետազոտողների և ինժեներների արտոնագրային ակտիվությունը, կիրառական նշանակության մշակումների առևտրայնացման հնարավորություններն ու խոչընդոտները, ինչպես նաև մշակվել են տնտեսամաթեմատիկական մոդելներ, որոնց հիման վրա գնահատվել է ՀՀ տեխնոլոգիական բալանսը: Միաժամանակ, այստեղ կատարվել է հետազոտություն՝ նվիրված ՀՀ տնտեսության բարձր տեխնոլոգիական հատվածներում ներդրումների ներգրավման հնարավորություններին ու կառուցակարգերին, մասնավորապես՝ տնտեսամաթեմատիկական մոդելների

միջոցով գնահատվել է ՀՀ հեռահաղորդակցության ոլորտում և բարձր տեխնոլոգիական ծառայությունների շուկայի մյուս հատվածներում ներդրումների իրականացման արդյունավետությունը:

ՀՊՏՀ շարունակական կրթության և վերապատրաստումների բաժինը հաշվետու ժամանակահատվածում կազմակերպել է մի շարք վճարովի և անվճար կարճաժամկետ դասընթացներ, որոնց շահառուներն են եղել ինչպես ՀՊՏՀ ուսանողներն ու դասախոսները, այնպես էլ այլ հաստատությունների մասնագետներ: Մասնավորապես՝ Ազգային բժշկական պալատի հետ համատեղ իրականացվել է «Հոսպիտալ մենեջմենթ» դասընթացը՝ հաստատված ՀՀ առողջապահության նախարարի հրամանով: Ծրագրի մասնակիցներին շնորհվել են ՇՄԶ 54 տեսական և 9 գործնական կրեդիտներ: Բացի այդ, իրականացվել են «Դեյթամոտուս» ընկերության հետ միասին՝ «R ծրագրավորման լեզվի», Նախագծերի կառավարման ինստիտուտի (PMI) հայաստանյան մասնաճյուղի հետ համատեղ՝ «Նախագծերի կառավարման հիմունքներ», Տուրիզմի հայկական ֆեդերացիայի հետ համատեղ՝ «Ներգնա և արտագնա տուրօպերատորական գործունեություն», «Նախագծի առաջարկի մշակում և ֆոնդահայթայթում. 3 գործիք + 2 մեթոդ», «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ աշխատակիցների համար՝ «Մարքեթինգը երկաթուղային տրանսպորտում» խորագրով վերապատրաստման դասընթացները: Ընդհանուր առմամբ, նշված դասընթացներին մասնակցել է 133 մասնագետ: Կազմակերպվել են նաև ուսանողական նախագծեր, մասնավորապես՝ SMARTOLOGY Digital Business Academy-ի հետ համատեղ՝ «SMM սկսնակների համար» և «SMM խորացված գործիքակազմ աշխատող մասնագետների համար», իսկ REFINE նախագծի շրջանակում՝ «Ինչպես կառուցել հաջողակ կարիերա ՀՀ ֆինանսական ոլորտում» դասընթացները: Վերապատրաստումներին մասնակցել է 269 ուսանող:

2020 թ. հունվարի 14-ին ՀՊՏՀ-ում կայացել է «1991 ստորաբաժանման» նախապատրաստական դասընթացի թեստավորման փուլը: Տվյալագիտության և արհեստական բանականության ոլորտների վերաբերյալ FAST հիմնադրամի (Հայաստանի գիտության և տեխնոլոգիայի հիմնադրամ) կազմակերպած դասընթացին մասնակցելու հայտ էր ներկայացրել ամառային զորակոչի ենթակա մոտ 400 երիտասարդ: Թեստավորման փուլը հաղթահարել է 46-ը, իսկ դասընթացը մեկնարկել է փետրվարի 3-ին՝ 6 ամիս տևողությամբ: Ինտենսիվ նախապատրաստական դասընթացի նպատակն է նախազորակոչային տարիքի երիտասարդներին տրամադրել լրացուցիչ գիտելիքներ տվյա-

լագիտության և արհեստական բանականության ոլորտների վերաբերյալ, որպեսզի նրանք պատրաստ լինեն հետագայում ծառայության անցնելու «1991 ստորաբաժանումում»:

Հաշվետու տարում իրականացվել են ՀՊՏՀ խորհրդանիշներով գրիչների, թվային կրիչների, գրենական պիտույքների, հագուստների, թերմոսների, պայուսակների և այլ պարագաների դիզայնավորում և մի մասի ձեռքբերում: Սակայն, բուհի տարածքում դրանց վաճառքը չի կազմակերպվել ուսումնառության և աշխատանքի առցանց լինելու պատճառով՝ պայմանավորված երկրում հայտարարված արտակարգ և ռազմական դրությամբ:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ III

### *Կիրառական հետազոտություններ-կրթություն և կիրառական հետազոտություններ-տնտեսություն ոլորտներում միասնացման և համագործակցության ապահովում*

Ըստ ՀՊՏՀ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «Կիրառական հետազոտություններ-կրթություն և կիրառական հետազոտություններ-տնտեսություն ոլորտներում միասնացման և համագործակցության ապահովում» ռազմավարական նպատակի՝ 2020 թ.-ի համար նախատեսվել էին հետևյալ գործողությունները.

- բակալավրիատի ավարտական կուրսերի և մագիստրատուրայի ուսանողների 10%-ի ներգրավվածության ապահովում ՀՊՏՀ հետազոտական կենտրոնների և ամբիոնների ընթացիկ հետազոտական աշխատանքներում,
- հետազոտությունների առևտրայնացման և ֆանդրայզինգի ռազմավարության մշակում և հաստատում,
- հանրային հետաքրքրության ոլորտներում հետազոտությունների իրականացման նպատակով պետական կառավարման մարմինների հետ համագործակցության ձևաչափերի մշակում:

Հաշվետու տարում մշակվել և հաստատվել են «ՀՊՏՀ 2020-2024 թթ. գիտահետազոտական գործունեության զարգացման» ռազմավարական ծրագիրը, «ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական թեմաների և խմբերի ձևավորման, դրանցում ասպիրանտների և ուսանողների ներգրավման կարգը», ինչպես նաև ««Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2020 թ.

գործունեության ծրագիրը»: Գիտահետազոտական գործունեության ինստիտուցիոնալ և իրավական հենքի ձևավորումը նպատակաուղղված է գիտության՝ որպես համալսարանի գործունեության կարևորագույն և գերակա բաղադրիչներից մեկի հետագա զարգացմանը, ակադեմիական միջավայրում գիտական աշխատանքի նկատմամբ պատշաճ վերաբերմունքի արմատավորմանը:

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի և ամբիոնների ընթացիկ հետազոտական աշխատանքներում սովորողների մասնակցությունը խրախուսելու համար վերոնշյալ կարգով պարտադիր պայման է դարձել հետազոտական խմբերում վերջիններիս 30%-ի մասնակցության ապահովումը:

2020 թ.-ի ընթացքում «Ամբերդ» հետազոտական կենտրոնն արտաքին և ներքին շահառուների առաջարկությունների հիման վրա, դրամաշնորհային հիմունքով իրականացրել է 13 հետազոտական ծրագրեր, որոնց թեմատիկ ընտրությունը կատարվել է պետական կառավարման մարմինների հետ համագործակցության շրջանակում, վերջիններիս պատվերով՝ հաշվի առնելով համապատասխան ոլորտներում պետական քաղաքականության մշակման համար գործնական հետաքրքրություն ներկայացնող ուղղությունները: Կենտրոնը 2020 թ. իրականացրել է 8 հետազոտական ծրագրեր հետևյալ գերատեսչությունների հետ համատեղ.

- ՀՀ անվտանգության խորհուրդ,
- ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,
- ՀՀ առողջապահության նախարարություն,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
- ՀՀ տարածքային կառավարման նախարարություն,
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,
- ՀՀ պետական եկամուտների կոմիտե,
- ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով:

Ներքին շահառուների մասնակցությամբ (ամբիոններ, մասնաճյուղեր) «Ամբերդ» կենտրոնն իրագործել է 5 հետազոտական ծրագրեր, որոնցում ներգրավված են եղել 30 ուսանող և ասպիրանտ: Այս ծրագրերի արդյունքները նույնպես քննարկվել են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համապատասխան մարմինների (ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան, Չինաստանում ՀՀ առևտրային ներկայացուցիչ) հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում «Ամբերդ» հետազոտական կենտրոնը, որպես համակատարող, ընդգրկված է եղել «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի կողմից համակարգվող ԵՏՀ «Եվրասիական տնտեսական միության զարգացման հեռանկարների և ռիսկերի վերլուծություն գլոբալ շուկայում առևտրային պատերազմների, ֆինանսական պատժամիջոցների և հովանավորչության աճի պայմաններում» թեմայով գիտահետազոտական աշխատանքներում:

2020 թ. լույս է տեսել «Ամբերդ» գիտահանրամատչելի տեղեկագրի 6 և «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի 4 համար: Ընդ որում, նույն ժամանակահատվածում «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսը ներառվել է Cyberleninka և eLIBRARY.RU էլեկտրոնային գիտական գրադարաններում: Գործնական քայլեր են կատարվում նաև վերջինս ResearchGate համակարգում գրանցելու ուղղությամբ:

«Ամբերդ» կենտրոնում փորձաքննության են ենթարկվել և համապատասխան առաջարկությունների փաթեթներ են մշակվել հետևյալ իրավական ակտերի վերաբերյալ.

- ՀՀ 2019 թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություն,
- ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- ««Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- ««Բարեգործության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- ««Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագիծ,

- «Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման գործընթացը կանոնակարգելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի նոյեմբերի 9-ի N731, 2001 թվականի փետրվարի 22-ի N125 և 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N1106-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

2020 թ. ՀՊՏՀ-ում իրականացվել կամ շարունակվել են ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության պետական կոմիտեի 5 դրամաշնորհային ծրագրեր՝

*Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացման/բազային/ ֆինանսավորում.*

1. «Կառավարչական որոշումների ընդունման և իրագործման կառուցակարգերի ու հաղորդակցության տեխնոլոգիաների ազդեցությունը ՀՀ հանրային կառավարման արդյունավետության վրա»,
2. «ՀՀ տնտեսության իրական և ֆինանսական հատվածների արդյունավետ փոխգործակցության հնարավորությունները»:

*Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր*՝

1. «Զարգացման տարածքային անհամաչափության պատճառները և կրճատման գործիքակազմի կիրառման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում»:

*Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում*՝

1. «Կիրառական նշանակության գիտահետազոտական մշակումների արտոնագրման և առևտրայնացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»,
2. «Հայաստանի Հանրապետության տնտեսության գիտելիքահենք արդիականացումը Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնոլոգիաների փոխանցման համատեքստում»:

Ընդհանուր առմամբ, հաշվետու ժամանակահատվածում ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ջանքերով հրապարակվել են 14 մենագրություն, 21 ուսումնական ձեռնարկ, 13 թեզիս, 381 հոդված, որից 197-ը՝ ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի հայաստանյան ամսագրերում, 141-ը՝ միջազգային պարբերականներում: Ազդեցության գործակից ունեցող ամսագրերում տպագրվել է ՀՊՏՀ-ականների 21 հոդված: Այս գործընթացը խթանելու նպատակով համալսարանում ներդրվել է հեղինակների խրախուսման համակարգ, ինչի արդյունքում նշված շտեմարաններում հրապարակումների քանակը, նախորդ ուստարվա համեմատ, աճել է մոտ 133%-ով:

Հաշվետու տարում ՀՊՏՀ աշխատակիցները պատրաստել և հրապարակել են 17 վերլուծական ակնարկներ ՀՀ տնտեսության և հանրային կյանքի

առանցքային խնդիրների առնչությամբ, մասնակցել են 106 ազգային և միջազգային գիտաժողովների, 93 սեմինարի, 32 workshop-ի և 28 դրամաշնորհային ծրագրերի:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ IV

### *Միջազգայնացման ընդլայնում*

Ըստ ՀՊՏՀ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «Միջազգայնացման ընդլայնում» ռազմավարական նպատակի՝ 2020 թ.-ի համար նախատեսված էին հետևյալ գործողությունները.

- միջազգային ծրագրերին մասնակցության ընդլայնման նպատակով ֆանդրայզինգի ստորաբաժանման հիմնադրում,
- միջազգային հիմնադրամներից ֆինանսավորման նպատակով արտերկրի հետազոտական հաստատությունների և կոնսորցիումների հետ կապերի ընդլայնում,
- օտարալեզու հետազոտությունների իրականացում և հրապարակում,
- արտերկրի գործընկերների հետ համատեղ և կրկնակի որակավորում շնորհող նոր կրթական ծրագրերի մշակում և հաստատում,
- արտերկրի կրթական հաստատությունների հետ համատեղ և կրկնակի որակավորում շնորհող նոր մագիստրոսական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիաների ստացում,
- մագիստրոսական ՄԿԾ-ներում ընտրովի՝ օտար լեզվով դասավանդվող դասընթացների ներառում:

ՀՊՏՀ-ն օտարերկրյա բուհերի հետ համագործակցելու նպատակով վերջին տարիներին կնքել է ավելի քան 50 հուշագիր: 2020 թ.-ին ակադեմիական գործակցության հետագա զարգացման համար 23 բուհի և միջազգային կրթական հաստատությունների հետ կնքվել և վերակնքվել են համագործակցության պայմանագրեր գիտահետազոտական և ուսումնական, այդ թվում՝ ուսանողների, դասախոսների, հետազոտողների փոխանակման, համատեղ հետազոտական ծրագրերի իրականացման, գիտաժողովների և սեմինարների մասնակցության ուղղություններով: Ձեռք են բերվել պայմանավորվածություններ համատեղ մագիստրոսական ծրագրեր ստեղծելու մասին:

Միջազգայնացման գլխավոր նպատակներից մեկը ուսանողների և դասախոսների շարժունության ընդլայնումն է: Հաշվետու տարում ուսանողների, դասախոսների և վարչական աշխատակիցների փոխանակումը կատարվել է

առավելապես Եվրոպական Միության «Էրազմուս+» ծրագրի հիմնական գործողություն 1-ի շրջանակում, որին մասնակցել են 7 դասախոս և 17 ուսանող: Միջազգային կապերի բաժինը նույն ժամանակահատվածում դիմել է 90 եվրոպական համալսարանների՝ «Էրազմուս+» ծրագրի շրջանակում համագործակցելու նկատառումով, որոնցից 27-ը (Պորտոյի համալսարան, Վիեննայի կիրառական գիտությունների համալսարան, Մալթայի արվեստի, գիտության և տեխնոլոգիայի քոլեջ, Սալոնիկի Արիստոտելի անվան համալսարան, Էդինբուրգի Նափիեր համալսարան, Միշկոլցի համալսարան և այլն) արդեն տվել է իր համաձայնությունն այս առնչությամբ: Սակայն, կախված համավարակից և համալսարանների ծրագրային բյուջեների փոփոխություններից, այս ծրագրերը դեռևս հստակեցված չեն: Շարունակվում է տնտեսագիտական ֆակուլտետներ կամ համապատասխան ուղղվածություն ունեցող եվրոպական այլ համալսարանների հետ համագործակցության նոր կապերի հաստատման գործընթացը:

ՀՊՏՀ-ն փոխգործակցության համաձայնագրեր ունի նաև ռուսական մի շարք բուհերի հետ: Այս համատեքստում հաջողված օրինակ է Բարձրագույն տնտեսագիտական դպրոց ազգային հետազոտական համալսարանի հետ համագործակցությունը, որի շրջանակում հաշվետու տարում ՀՊՏՀ-ում հյուրընկալվել են դասախոսներ Ա. Ստեպանովան և Պ. Մալիշևը, որոնք հանդես են եկել հետաքրքրական դասախոսություններով (թեմաներ՝ «Վարքագծային կորպորատիվ ֆինանսներ կամ ինչո՞ւ է մարդկանց նշանակությունն այդքան մեծ բիզնեսում» և «Ինչպե՞ս ձեռնարկությունում արդյունավետ կերպով կառավարել ֆինանսները բարձր անորոշության պայմաններում»): Այս կապը շարունակական բնույթ է կրում, և նախատեսվում են նմանատիպ այլ այցելություններ ևս, ինչպես նաև ծրագրվում է ամառային դպրոցի անցկացում:

Ուրալի պետական տնտեսագիտական համալսարանի հետ ձեռք է բերվել համաձայնություն՝ սկսած 2021 թվականի գարնանային կիսամյակից կազմակերպելու ուսանողների փոխանակման ծրագրեր առցանց և անցանց ձևաչափերում: Վերջին դեպքում ՀՊՏՀ ուսանողները կկարողանան 1 կիսամյակ սովորել տվյալ համալսարանում՝ հոգալով միայն կեցության և ճանապարհի ծախսերը:

2020 թ. հոկտեմբերից ՀՊՏՀ-ն մասնակցում է Ամերիկյան խորհուրդների գրասենյակի և ԱՄՆ-ի դեսպանատան կազմակերպած՝ Հայաստանի և Վրաստանի բուհերի միջազգայնացման խթանմանն ուղղված ծրագրին, որի շրջանակում, հաղթահարելով մրցութային փուլը, դարձել է այն 3 բուհերից մեկը, որ խորհրդատվական աջակցություն կստանա Ամերիկյան խորհուրդների գրասենյակի կողմից և COIL հարթակի միջոցով կհամագործակցի ամերիկյան

առաջատար բուհերի հետ՝ մշակելով և իրականացնելով մոդուլների համատեղ դասավանդում:

Կարևորելով բուհի միջազգային վարկանշավորման հարցը՝ հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են կատարվել նաև այս ուղղությամբ: Մասնավորապես՝ 2020 թ.-ին առաջին անգամ ՀՊՏՀ-ն ներառվել է Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (EECA) բուհերի QS World University Rankings 2021 վարկանշում: Հայաստանից այս վարկանշային աղյուսակում ներառված է 5 բուհ, և ՀՊՏՀ-ն Հայաստանի ամերիկյան համալսարանի և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հետ միասին կիսում է 251-300-րդ հորիզոնականները:

2020 թ. հունվարին հրապարակվել է Փենսիլվանիայի համալսարանի՝ Աշխարհի ուղեղային կենտրոնների գլոբալ վարկանշավորման զեկույց 2019 (Go To Think Tank Index Report 2019), համաձայն որի «Ամբերդ» հետազոտական կենտրոնը Կենտրոնական Ասիայի առաջատար ուղեղային կենտրոնների շարքում նախորդ տարվա համեմատ բարելավել է իր դիրքը երկու հորիզոնականով՝ զբաղեցնելով 59-րդ տեղը, իսկ աշխարհի 100 լավագույն համալսարանական ուղեղային կենտրոնների շարքում, ինչպես և նախորդ տարի, զբաղեցրել 94-րդ հորիզոնականը: Times higher education world university rankings-ում (THE world university rankings) ներկայում մուտքագրվում են տվյալներ Impact ranking վարկանշավորման մեջ ընդգրկվելու համար:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են վերլուծություններ՝ կապված webometrics և 4–icu վարկանշավորման աղյուսակների հետ ու ներկայացվել համապատասխան առաջարկներ ՀՊՏՀ պաշտոնական կայքում փոփոխություններ իրականացնելու վերաբերյալ: Այս գործողությունը ներկայում աշխատանքային փուլում է:

ՀՊՏՀ-ն հաշվետու ժամանակաշրջանում անդամակցել է Եվրասիական, BSEMAN համալսարանական ասոցիացիաներին, ինչպես նաև քայլեր են կատարվում Համալսարանների միջազգային ասոցիացիային անդամակցության համար, որին միանալու դիմումը հաստատվել է, և վերջնական բանակցային փուլից հետո բուհը կկարողանա դառնալ ասոցիացիայի լիարժեք անդամ:

Լանչժոուի համալսարանի նախաձեռնությամբ և Չինաստանի կառավարության օժանդակությամբ 2015 թ. ստեղծված՝ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության համալսարանների ընկերակցությանը ՀՊՏՀ անդամակցումը նույնպես առաջիկա նպատակներից մեկն է: Ընկերակցությանն անդամակցում է Ասիան, Եվրոպան, Աֆրիկան և Ամերիկան ներկայացնող 25 երկրի 126 համալսարան: Ընկերակցությունը խնդիր է դրել ստեղծելու համապա-

տասխան հարթակ, որը թույլ է կտա միասնաբար օգտագործել գիտական ռեսուրսները, ներդնել ուսանողների և գիտաշխատողների փոխանակումների կառուցակարգ, իրականացնել համատեղ հետազոտություններ, համակարգել նորարարական գործունեությունը և կրթել միջազգային մակարդակի մասնագետների, որոնք կնպաստեն «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագիծն ընդգրկող երկրների սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Աշխատանքներ են կատարվում ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի՝ Մետաքսի ճանապարհի ուղեղային կենտրոնների ընկերակցությանն անդամագրման ուղղությամբ: Վերջինիս ներկայում անդամակցում են 122 երկրի ուղեղային կենտրոններ, այդ թվում՝ Չինաստանում գործող մոտ 140 հետազոտական հաստատություններ:

Միջազգային ծրագրերին մասնակցության ընդլայնման նպատակով ՀՊՏՀ-ում ֆանդրայզինգի ինստիտուտի հիմնումը դրական ազդեցություն է ունեցել նոր ծրագրերի ներգրավման առումով: 2020 թ. համալսարանն առաջին անգամ դարձել է EUCON («Էրազմուս+») «ԵՄ և ԵԱՏՄ. հակամարտության և մրցակցության միջև, մերձեցում և համագործակցություն» Ժան Մոնե դրամաշնորհի շահառու: EUCON նախագիծը ստեղծված է «Ժան Մոնե Նեթվորք» ծրագրի շրջանակում և ուղղված է ԵՄ - ԵԱՏՄ հարաբերությունների ուսումնասիրմանը, որը բնութագրվում է բախումով և մրցակցությամբ, մերձեցմամբ և (հնարավոր) համագործակցությամբ: Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնը ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետում արդեն իսկ դասավանդում է «ԵՄ և ԵԱՏՄ անատոմիան. Հայաստանի ընտրությունը» առարկան: Ծրագրի համակարգողը Վիեննայի կիրառական գիտությունների համալսարանն է (UAS-BFI): Ծրագրի ընդհանուր բյուջեն 300,000.00 եվրո է, տևողությունը՝ 3 տարի:

